



Կարգապահական գործ թիվ 17028

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի դեկտեմբերի 06-ի թիվ 189-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/116-Ա

**ՓԱՏԱԲԱՆՆԵՐ ԱՐՄԵՆ ՄՈՒԽՍԻԿԱՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Արմեն Մուխսիկարոյանին (արտոնագիր՝ 1233) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Չ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

18.04.2017թ. Պալատում մուտքագրվել է Մարյամ Ռամաթի (**այսուհետ նաև՝ Դիմող**) ներկայացուցիչ, փաստաբան Ալեքսանդր Սահակյանի դիմումը, որի համաձայն՝ 17.08.2016թ. Դիմողի և նրա ընտանիքի անդամների կողմից կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի հետ: Պայմանագրի առարկան եղել է Դիմողի և նրա ընտանիքի անդամների շահերի ներկայացումը ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում և ՀՀ վարչական դատարանում՝ Հայաստանում կացության իրավունք ձեռք բերելու համար: 10.11.2016թ. Պատասխանողը տվել է ստացական հետևյալ բովանդակությամբ. «Մախսա Ռահիմից ստացա 200 դոլարին համարժեք դրամ, իրենց ընտանիքի թվով 4 անդամ Հայաստանում կացության իրավունքի համար վարչական դատարան դիմելու համար: Հայցերը կներկայացվեն 3-4 օրվա ընթացքում: Պարտավորվում եմ հնարավոր սեղմ ժամկետներում ապահովել վճռի հրապարակումը, քննությունը պետք է ավարտվի 2 ամսում, իսկ վճիռը հրապարակվի 15 օրում, սակայն դատավորի գործողությունները չեն կարող վերահսկվել, օրենքով սահմանված ժամկետներում պարտավորվում եմ անել»:

Դիմողը հայտնել է, որ Պատասխանողը ծառայությունների կնքման պահին, ինչպես նաև 10.11.2016թ. դրությամբ չէր դիմել վարչական դատարան՝ վերը նշված ակտերը

բողոքարկելու պահանջով, քանի որ նա տեղյակ է եղել, որ բաց է թողնվել վաղեմության ժամկետը: Մինչդեռ, Պատասխանողը նույնիսկ փորձ չի կատարել դիմել վարչական դատարան՝ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու պահանջով, այսինքն՝ Պատասխանողի կողմից չեն մատուցվել ծառայությունները՝ համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է Պատասխանողին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 18.05.2017թ. թիվ 134-Ա/ԿԳ-17028 որոշման հիման վրա Պատասխանողի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.8, 3.1.10 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Ռուբեն Բալոյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Նախապատրաստման ընթացքում Դիմողի կողմից բացատրություն չի ներկայացվել: Դիմողը, սահմանված կարգով պատշաճ տեղեկացված լինելով Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին, նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պալատի նախագահի կողմից դիմումի քննարկման ընթացքում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.3 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանողը 15.05.2017թ. Պալատ է ներկայացրել գրավոր բացատրություն, ըստ որի՝ որպես հարցի լուծում Պատասխանողն իր վստահորդներին առաջարկել է անհապաղ ձեռնարկատիրական գործունեություն սկսել Հայաստանում: Մասնավորապես, 19.08.2016թ. Պատասխանողը դիմել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ պարզելու համար կացության իրավունքի գրանցման մերժման հիմքերը: Հետագայում Պատասխանողը հրավիրվել է Ազգային անվտանգության ծառայություն, որտեղ իր դիմումով զբաղվող աշխատակիցը պարզաբանել է, որ իր վստահորդներն ակնհայտ կեղծված փաստաթղթերով ցանկացել են կացության իրավունք ձեռք բերել: Մասնավորապես, հիմնադրել են «Ռեգուլուսես» ընկերությունը, որը, սակայն, չի աշխատել և նման նպատակ էլ չի ունեցել: Ըստ Պատասխանողի՝ իրեն պարզաբանվել է, որ կացության կարգավիճակը կտրամադրվի, եթե ընկերությունը ձեռնարկատիրական գործունեություն ծավալի: Նշվածի մասին Պատասխանողը տեղեկացրել է նաև իր վստահորդներին: Ստացականի վերաբերյալ Պատասխանողը նշել է, որ դրանով

պարզաբանել է դատական քննության ժամկետները և այն, որ ինքը գործի ելքի, ինչպես նաև դատավորի կողմից ժամկետների հարցով պատասխանատու չէ: Ստացականում նշել է. «Հարցերը կներկայացվեն 3-4 օրվա ընթացքում», սակայն Դիմողը դիտավորյալ «հարց» բառը գրել է «հայց» և ներկայացրել որպես պարտավորություն: Պատասխանողը ներկայացրել է նաև հիմնավորումներ՝ Դիմողի կողմից անվավեր կամ ոչ վերաբերելի լիազորագիր ներկայացնելու վերաբերյալ և խնդրել է ներկայացված դիմումը թողնել անհետևանք:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Խորհրդի նիստում Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որի համաձայն՝ իր և վստահորդների միջև կնքված պայմանագիրը պետք է կատարվեր երկու փուլով. 1-ին փուլում վստահորդներն իրեն պետք է վճարեին իրենց գործի մանրամասները ճշտելու և իրենց կացության կարգավիճակի տրամադրման մերժման պատճառները պարզաբանելու համար, իսկ երկրորդ փուլում վճարումը կատարվելու էր, եթե վստահորդները ցանկանային գործը շարունակել դատարանում:

Ըստ Պատասխանողի՝ ինքն ի սկզբանե վերապահումով է ստանձնել Դիմողի գործը, քանի որ իր համար պարզ չէր, թե ինչու է Ազգային անվտանգության ծառայությունը մերժել Դիմողին և իր ընտանիքի անդամներին կացության կարգավիճակ տրամադրելը, և Պատասխանողը Դիմողին ասել է, որ նախևառաջ ինքը կճշտի մերժման պատճառները:

Ազգային անվտանգության ծառայությունում, հանդիպելով իր վստահորդների դիմումով զբաղվող աշխատակցի հետ, ով իրեն պարզաբանել է, որ առևտրային կազմակերպության հիմնադրումը հիմք է մեկ տարի և ավելի ժամկետով կացության կարգավիճակ ստանալու համար, եթե կազմակերպության հիմնադրումից հետո ձեռնարկատիրական գործունեություն է իրականացվել ՀՀ-ում: Պատասխանողի վստահորդների դիմումի մերժման պատճառը եղել է նրանց կողմից առևտրային կազմակերպության հիմնադրումը, որը Հայաստանում փաստացի որևէ գործունեություն չի իրականացրել և նպատակ չի ունեցել գործունեություն ծավալել: Պատասխանողն Ազգային անվտանգության աշխատակցին ասել է, որ իր վստահորդներն իրեն հայտնել են, որ ՀՀ ինչ-որ քաղաքացուց ստացել են երաշխիք, որ ընկերության հիմնադրման դեպքում կստանան ՀՀ-ում կացության իրավունք, և իր վստահորդները կեղծիք անելու ցանկություն չեն ունեցել և, իրոք, նպատակ են ունեցել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել: Սույն տեղեկատվությունը, ըստ Պատասխանողի, իրեն լիազորել են փոխանցել Դիմողն ու իր ընտանիքի անդամները: Պատասխանողի փոխանցմամբ, ձեռնարկատիրական գործունեության իրականացնելու փաստն Ազգային անվտանգության ծառայությունը՝ որպես վարչական մարմին, կարող էր ստուգել հարկային հաշվետվություններով կամ Պատասխանողի վստահորդների կողմից հսկիչ դրամարկղային մեքենա տեղադրելու դեպքում՝ նրանց փաստացի դրամաշրջանառությունը պարզելով: Երբ վստահորդներն սկսեին Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն ծավալել, Պատասխանողը կարող էր դիմում ներկայացնել Ազգային անվտանգության ծառայություն՝ խնդրելով վերանայել նախորդ որոշումը՝ հաշվի առնելով, որ Դիմողն ու իր ընտանիքի անդամները կեղծ փաստաթուղթ չեն ներկայացրել, և ընկերության փաստաթղթերն իսկական են: Ազգային անվտանգության ծառայության

աշխատակիցը Պատասխանողին ասել է նաև, որ իր վստահորդները պետք է հաղարդում տան այն անձի վերաբերյալ, ով նրանց նշված ճանապարհով կացության կարգավիճակ ստանալու խորհուրդ է տվել:

Պատասխանողը նշել է, որ ինքը Դիմողի և նրա ընտանիքի անդամների հետ շփվել է թարգմանչի միջոցով, քանի որ պարսկերենին չի տիրապետում:

Մոտ 3-4 ամիս Պատասխանողի վստահորդներն իր հետ չեն հանդիպել, և քանի որ բոլոր դեպքերում Հայաստան յուրաքանչյուր մուտքի դեպքում նրանք մինչև 3 ամիս կարող էին մնալ, և վտարման խնդիր, ըստ էության, չունեին, Պատասխանողը կարծել է, որ այդ 3-ամսյա ժամկետը վստահորդներին բավարարում է, և իր հետագա ծառայությունների կարիքը չունեն:

Սակայն նշված ժամկետի ավարտից հետո վստահորդները հանդիպել են իրեն և ցանկություն են հայտնել շարունակել գործը: Պատասխանողը նրանց հայտնել է, որ իրենց պայմանավորվածության համաձայն՝ պայմանագրի մյուս մասը՝ դատարան դիմելն իրականացնելու համար Դիմողն ու նրա ընտանիքի անդամները պետք է վճարեն յուրաքանչյուրը ևս 400 ԱՄՆ դոլար: Վերջիններս համաձայնեցին, սակայն խնդրեցին գումարը վճարել տարաժամկետ կարգով՝ սկզբից վճարեն 200 ԱՄՆ դոլար, իսկ գումարի մնացած մասը՝ ավելի ուշ, ինչին Պատասխանողը համաձայնել է և կազմել է ստացական առ այն, որ գործը շարունակելու համար վստահորդներից ստացել է 200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Բացի այդ Պատասխանողը թե՛ գրավոր և թե՛ բանավոր կարգով վստահորդներին բացատրել է, որ գործը շարունակելու համար իրեն հարկավոր է լիազորագիր, և որպեսզի նրանք աշխատեցնեն ընկերությունը, ինչը հիմք կտա բողոքարկել տվյալ պահին հիմնավոր ակտը: Պատասխանողի պնդմամբ, ո՛չ Դիմողը և ոչ էլ նրա ընտանիքի անդամները գործի հաջողության երաշխիք կամ դատական գործընթացի ելքի կանխորոշում չեն պահանջել, այլ միայն հարցրել են գործընթացի ժամկետներից, որին Պատասխանողը պատասխանել է՝ նշելով վարչա-դատավարական գործող օրենսդրությամբ նախատեսված ժամկետները:

Ինչ վերաբերում է ստացականում «վճիռ» բառը գրելուն, Պատասխանողը նշել է, որ ի սկզբանե պետք է գրվեր «որոշում», սակայն քանի որ իր վստահորդները չէին հասկանում որոշման և վճռի տարբերությունը և հասկանում էին միայն, թե ինչ է վճիռը, Պատասխանողը համաձայնել է գրել «վճիռ»: Նմանապես, ստացականում «սեղմ ժամկետում» բառակապակցության շարադրումը պայմանավորված է եղել նրանով, որ Դիմողն ու իր ընտանիքի անդամները չէին հասկանում, թե ինչ է նշանակում վարչական-դատավարական օրենսդրության մեջ օգտագործվող «ողջամիտ ժամկետ» արտահայտությունը, և թարգմանիչը դժվարացել է այդ եզրույթը թարգմանել:

Անդրադառնալով Դիմողի ներկայացուցիչ փաստաբան Ա.Սահակյանի այն նկատառմանը, որ վարչական ակտի բողոքարկումը հնարավոր չէր, մինչդեռ, Պատասխանողն իր վստահորդներին այդ մասին չէր հայտնել՝ Պատասխանողը նշել է, որ դրա հետ համաձայն չէ, քանի որ վարչական դատավարության մեջ կա պարտավորեցման հայցի ինստիտուտը: Պատասխանողը կարող է երկրորդ անգամ դիմել վարչական մարմնին, և եթե վարչական մարմինը կրկին մերժի դիմումը, Պատասխանողն իրավունք ունի դիմել վարչական դատարան՝ պարտավորեցման հայցով:

Պատասխանողը պարզաբանել է նաև, թե ինչ է նշանակում ստացականում նշված 15-օրյա ժամկետը. դա դատաքննության ավարտից հետո մինչև դատարանի վճռի հրապարակումն ընկած ժամկետն է:

Պատասխանողը նշել և ստացականում գրավոր ամրագրել է, որ ինքը պատասխանատու չէ դատարանի գործողությունների, վճռի համար:

Պատասխանողը նաև հայտնել է, որ քանի որ ինքը չի գրել ստացականը, այլ՝ թարգմանիչը, թարգմանության խոտանի պատճառով ստացականի շարադրանքը խրթին է և անհասականալի, և ինքը ևս լրիվ չի հասկանում ստացականի շարադրանքը: Ստացական գրելու հիմնական նպատակ է նշել իր վստահորդներին գործի ընթացքի պարզաբանումը:

Հետագայում գործը կիսատ է մնացել: Դիմողի և իր ընտանիքի անդամների հիմնադրած ընկերությունն այդպես էլ չի գործարկվել, իսկ ստացականը գրելու հաջորդ օրվանից Պատասխանողն իր վստահորդներին չի տեսել:

Պատասխանողը ներկայանալով խորհրդի նիստին վերահաստատել է իր դիրքորոշումը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 21.07.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը գտել է, որ Պատասխանող Արմեն Մուխսիկարոյանի արարքում 3.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներ առկա չեն, վերջինիս արարքում առկա են Կանոնագրքի 3.1.10 ենթակետի խախտման հատկանիշներ:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 21.07.2017 թ:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 22.09.2017թ. ժամը 18:30-ին և 06.12.2017թ. ժամը 18:30-ին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը՝

1. 17.08.2016թ. Մարյամ Ռամաթի և նրա ընտանիքների և փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի միջև կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որի առարկան եղել է Մարյամ Ռամաթի և նրա ընտանիքի անդամների շահերի ներկայացումը ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում և ՀՀ վարչական դատարանում՝ Հայաստանում կացության իրավունք ձեռք բերելու համար:
2. 19.08.2016թ. փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը դիմում է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գ. Կուտոյանին՝ նշելով, որ իր վստահորդներ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ Մահսա Ռահիմի Դոաբին, Մարիամ Ռամեմաթի Դոաբին, Մետրդադ Ռահիմի Դոաբին և Ռամեզան Ռահիմի Դոաբին չեն ընդունում իրենց կողմից այնպիսի արարքի կատարումը, որի հիման վրա իրենք կհամարվեն ՀՀ համար ոչ ցանկալի անձ և խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝ արդյո՞ք իր վստահորդները վտանգ են ներկայացնում ՀՀ անվտանգության համար, թե ոչ:
3. 09.03.2017թ. փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը դիմել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Ս.Ք. Սաջադիին՝ նշելով, որ ինքը՝ որպես փաստաբան, պատրաստ է կատարել իր պարտավորությունը, եթե ներկայացվի ապացույց «Ռեգիլոս» ՍՊԸ-ն ընկերության աշխատելու վերաբերյալ: Դիմումում Արմեն Մուխսիկարոյանը խնդրում է դեսպանին միջամտել իր վստահորդներին բացատրելու, որ կեղծ փաստաթղթերով կացության իրավունք ձեռք բերել չեն կարող, իսկ իր պայմանագրային պարտավորությունները համարում է կատարված:
4. 10.11.2016թ. փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը տվել է ստացական հետևյալ բովանդակությամբ.«Մահսա Ռահիմիից ստացա 200 դոլարին համարժեք դրամ, իրենց ընտանիքի թվով 4 անդամ Հայաստանում կացության իրավունքի համար վարչական դատարան դիմելու համար: Հայցերը կներկայացվեն 3-4 օրվա ընթացքում: Պարտավորվում եմ հնարավոր սեղմ ժամկետներում ապահովել վճռի հրապարակումը, քննությունը պետք է ավարտվի 2 ամսում, իսկ վճիռը հրապարակվի 15 օրում, սակայն դատավորի գործողությունները չեն կարող վերահսկվել, օրենքով սահմանված ժամկետներում պարտավորվում եմ անել»:
5. Մահսա Ռահիմի Դոաբիի, Մարիամ Ռամեմաթի Դոաբիի, Մետրդադ Ռահիմի Դոաբիի և Ռամեզան Ռահիմի Դոաբիի և փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի միջև 17.08.2016թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով նախատեսված էր Մուխսիկարոյանի պարտականությունը ներկայացնել պատվիրատուների շահերն Ազգային անվտանգության ծառայությունում և վարչական դատարանում ՀՀ-ում

կացության իրավունք ձեռք բերելու համար:

6. Մահսա Ռահիմի Դոաբիի, Մարիամ Ռաեմաթի Դոաբիի, Մեերդադ Ռահիմի Դոաբիի և Ռամեզան Ռահիմի Դոաբիի և փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի միջև 17.08.2016թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով նախատեսված էր, որ պատվիրատուները 400-ական ԱՄՆ դոլարին համարժեք դրամ պետք է վճարեին պայմանագրերի կնքման օրը, դրանից հետո՝ ևս 400 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և գործը դատական կարգով վիճարկելու դեպքում՝ ևս 100-ական ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:
7. Մահսա Ռահիմի Դոաբիին, Մարիամ Ռաեմաթի Դոաբիին, Մեերդադ Ռահիմի Դոաբիին և Ռամեզան Ռահիմի Դոաբիին ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու մասին որոշումները ՀՀ ոստիկանությունը կայացրել է 04.07.2016թ.:
8. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանն իր վստահորդներին իրենց գործով դատական վարույթի արդյունքը չի երաշխավորել:

6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Արմեն Մուխսիկարոյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2011-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ առկա է 3 ավարտված կարգապահական վարույթ: 26.11.2015թ. Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ Կանոնագրքի 2.3.3 ենթակետի խախտման համար, և նշանակվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, և լրացուցիչ տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացի մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով: Կարգապահական տույժը մարվել է: 03.03.2016թ. հարուցվել է կարգապահական վարույթ Արմեն Մուխսիկարոյանի կողմից անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար և կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով, 09.03.2016թ. հարուցվել է կարգապահական վարույթ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար, որը կարճվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտում, իսկ Կանոնագրքի 3.1.8, 3.1.10 և 3.5.5 ենթակետերի հատկանիշներով փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

7.1 Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտման մասով

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ **փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:**

Կանոնագրքի սույն դրույթը ենթադրում է երկու բաղադրիչի միաժամանակյա առկայություն՝ փաստաբանի մասնագիտական պատրաստվածություն՝ իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն և բարեխիղճ վերաբերմունք վստահորդի իրավական խնդրի լուծման նկատմամբ՝ վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի սահմանադրական կարգավիճակի և հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության իրականացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն պարագայում Խորհուրդը հաստատված է համարում, որ Դիմողի և նրա ընտանիքի անդամների և Պատասխանողի միջև 17.08.2016թ. կնքվել են ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր, որոնց համաձայն՝ Պատասխանողը պարտավորվում էր ներկայացնել պատվիրատուների շահերն Ազգային անվտանգության ծառայությունում և վարչական դատարանում՝ ՀՀ-ում կացության իրավունք ձեռք բերելու համար: Պայմանագրերի 2.1.1 և 2.1.2 ենթակետերով սահմանված էր նաև Պատասխանողի պարտականությունը ծառայությունները մատուցել **պատշաճ որակով և ամբողջ ծավալով:**

Խորհուրդը հաստատված է համարում նաև, որ Դիմողի և նրա ընտանիքի անդամներին ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու մասին որոշումները ՀՀ ոստիկանությունը կայացրել է 04.07.2016թ.: Հենց սույն մերժումներն են եղել պատճառը, որ Դիմողն ու իր ընտանիքի անդամները դիմել են Պատասխանողին իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

Պատասխանողը Խորհրդի նիստում պնդել է, որ պայմանագիրը պետք է կատարվեր երկու մասով. սկզբից Պատասխանողը պետք է պարզեր իր վստահորդներին կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու պատճառները, և հետո նրանց համաձայնության դեպքում գործի շարունակվեր դատարանում: Մինչդեռ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերում հստակորեն նշված է Պատասխանողի պարտականությունը **ներկայացնել Դիմողի և իր հարազատների շահերն Ազգային անվտանգության ծառայությունում:** Սույն ձևակերպումը Պատասխանողի վրա դնում է լայն իրավական պարտավորություններ՝ սպասարկելու իր վստահորդների շահերը, որը չի սահմանափակվում միայն վստահորդների դիմումը մերժելու պատճառների պարզմամբ, հատկապես, որ այդ պատճառները որոշակիորեն նշված էին ՀՀ ոստիկանության նշված որոշումներում:

Ավելին՝ 07.02.2008թ. ՀՀ Կառավարության 134-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի քննարկման կարգի 1-ին կետի համաձայն՝ *օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ փախու և կացության կարգավիճակը երկարաձգելու որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը*: Նույն կարգի 2-րդ կետի համաձայն՝ *օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ փախու հարցն անձնագրային և վիզաների վարչությունը համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության հետ*: Կարգի 3-րդ կետին համապատասխան՝ *Ազգային անվտանգության ծառայությունն օտարերկրացուն կացության կարգավիճակ փախու կամ կացության կարգավիճակը երկարաձգելու հարցի վերաբերյալ 7-օրյա ժամկետում անձնագրային և վիզաների վարչություն է ներկայացնում իր համաձայնության կամ առարկության վերաբերյալ տեղեկատվություն*:

Այսինքն՝ օտարերկրացիներին կացության կարգավիճակի տրամադրման վարչական վարույթում Ազգային անվտանգության ծառայությունը միայն իր կարծիքն է հայտնում կացության կարգավիճակի տրամադրման հարցի շուրջ, իսկ վերջնական որոշումն ընդունում է ՀՀ ոստիկանությունը, որը և տվյալ վարչական վարույթում հանդիսանում է իրավասու վարչական մարմինը: Հետևաբար իրավական առումով Պատասխանողի դիմումն Ազգային անվտանգության ծառայության տնօրենին և նրա հանդիպումը դիմումով զբաղվող՝ Ազգային անվտանգության ծառայության աշխատակցի հետ էական նշանակություն չուներ իր վստահորդների խնդրի լուծման համար: Տվյալ պարագայում Պատասխանողը պետք է նախևառաջ դիմեր ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությանը և այդ թվում կարող էր վերադասության կարգով բողոքարկել իր վստահորդների՝ մերժման որոշումները: Սույն պարագայում հատկանշական է, որ Դիմողի և իր հարազատների հետ կնքված պայմանագրերում նշվել է Պատասխանողի պարտականությունն իր վստահորդների շահերը ներկայացնել Ազգային անվտանգության ծառայությունում: Մինչդեռ, Պատասխանողը պարտավոր էր տեղյակ լինել օտարերկրացիներին կացության կարգավիճակ տրամադրելու վարչական վարույթի կարգին՝ ներառյալ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմանը և իր վստահորդներին բացատրել, որ տվյալ իրավիճակում հիմնական վարչական մարմինը, որին պետք է դիմել ՀՀ ոստիկանությունն է:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ *Վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում*:

Նույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին*:

Նշվածից հետևում է, որ վարչական վարույթի շրջանակներում իր վստահորդներին բարեխիղճ և իրազեկ իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար Պատասխանողը

պարտավոր էր դիտարկել ՀՀ ոստիկանության դիմումը վերադասության կարգով բողոքարկելու հնարավորությունը՝ այդ թվում հաշվի առնելով, որ բողոքարկման համար իր վստահորդների հետ պայմանագրեր կնքելու պահին մնացել էր մոտ երկու շաբաթ ժամանակ: Եթե նույնիսկ պայմանագրով նախատեսված էր Պատասխանողի պարտականությունը վստահորդներին օգնություն ցույց տալ Ազգային անվտանգության ծառայության հետ հարաբերություններում, ապա Պատասխանողը կարող էր իր բողոքը հասցեագրել Ազգային անվտանգության ծառայությանը, որը նշված օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ բողոքը կվերահասցեագրեր Ոստիկանությանը:

Պատասխանողի կողմից ցուցաբերված անգործության և ոչ ճիշտ իրավական լուծումներ կիրառելու հետևանքով բաց են թողնվել վերադասության կարգով ՀՀ ոստիկանության համապատասխան որոշումները բողոքարկելու ժամկետները: Մինչդեռ, նույնիսկ ոչ պատշաճ վարչական մարմնին՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը բողոքն ուղարկելու դեպքում բողոքարկման վարույթը կարող էր հարուցվել, և բողոքարկման ժամկետներն էլ պահպանված կլինեին: Այդպիսով դատավարական ժամկետների առումով պահպանված կլինեին նաև վարչական դատարան դիմելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն պնդմանը, որ գործը դատարան տանելու համար իրեն հարկավոր էր իր վստահորդների համաձայնությունը, ապա Խորհուրդը գտնում է, որ Դիմողի և իր հարազատների հետ կնքված պայմանագրերում խոսք է գնում միայն հոնորարի մի մասը գործը դատական կարգով բողոքարկելու դեպքում վճարելու մասին(3.1.1 ենթակետ): Միևնույն ժամանակ պայմանագրերի 2.1.1 և 2.1.2 ենթակետերում խոսվում է Պատասխանողի կողմից իր **ծառայությունը պատշաճ և ամբողջ ծավալով** մատուցելու մասին: Հետևապես, Խորհուրդը գտնում է, որ սույն պարագայում պայմանագրերում խոսք է գնում ոչ թե գործը դատական կարգով բողոքարկելուն **վստահորդների համաձայնություն** տալու մասին, որից հետո նոր Պատասխանողը պետք է նախաձեռնի դատական գործընթաց, այլ վարչական կարգով վստահորդների **իրավական խնդիրը չլուծվելու** պարագայում Պատասխանողի՝ դատարան դիմելու պարտականության մասին: Այլ կերպ ասած՝ դատարան դիմելը կախված էր ոչ թե Դիմողի և իր ընտանիքի անդամների համաձայնությունից, այլ վարչական կարգով իրենց գործի ընթացքից: Ուստի՝ Պատասխանողը վարչական կարգով գործի հետագա ընթացքի անհնարինության պարագայում պարտավոր էր քայլեր ձեռնարկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում նշված դատավարական ժամկետները պահպանելու և համապատասխան հայց վարչական դատարան ներկայացնելու ուղղությամբ:

Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև 03.03.2017թ. ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանին Պատասխանողի հասցեագրած գրությանը: Վերջինս ևս որևէ կերպ չէր նպաստել իրավական ճանապարհով Պատասխանողի վստահորդների խնդրի լուծմանը: Ավելին՝ Պատասխանողը հաշվի չի առել այն հանգամանքը, որ դեսպանն ի պաշտոնե իրավասու չէ զբաղվել թեկուզև իր պետության քաղաքացիների մասնավոր խնդիրներով, միջամտել նրանց և իրենց փաստաբանի պայմանագրային հարաբերություններին, և այդ թվում հաստատված համարել Պատասխանողի՝ որպես փաստաբանի պայմանագրային պարտավորություններն իր

վստահորդների հանդեպ կատարած լինելու փաստը: Բնականաբար, դեսպանը չունի նաև իրավական լիազորություն բացատրել իր քաղաքացիների այս կամ այն արարքի իրավաչափ կամ ոչ իրավաչափ լինելու հանգամանքը, որպիսի խնդրանքով իր վստահորդների մասով նրան դիմել էր Պատասխանողը:

Վերոշարադրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը բարեխիղճ իրավաբանական օգնություն չի տրամադրել իր վստահորդներին՝ պատշաճ խորությամբ չուսումնասիրելով նրանց իրավական խնդրի լուծման ուղիները, որոնք նախատեսված են ՀՀ գործող օրենսդրությամբ, ինչպես նաև չձեռնարկելով հանձնարարության պատշաճ կատարմանն ուղղված անհարեժեշտ գործողություններ:

7.2 Կանոնագրքի 3.1.8, 3.1.10 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.1.10 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, այդ թվում Պատասխանողի կողմից տրված ստացականը, հաստատված է համարել այն փաստը, որ Պատասխանողը հանձնարարության կատարման արդյունքի երաշխավորություն, այդ թվում վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում չի տվել:

Խորհուրդը գտնում է կարգապահական գործի քննության ընթացքում չի ներկայացվել այնպիսի ապացույց, որով կհիմնավորվեր, Պատասխանողի կողմից Կանոնագրքի 3.1.8, 3.1.10 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հանգամանքը:

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը,*

առկա փուլերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Պատասխանողի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, չմարված տույժերի բացակայությունը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է կիրառել նկատողություն տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 18.05.2017թ. թիվ 134-Ա/ԿԳ-17028 որոշմամբ փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի (արտոնագիր՝ 1233) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.8, 3.1.10 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով կարճել:

2. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանին (արտոնագիր՝ թիվ 1233), ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետերի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 1233), կիրառել կարգապահական փուլ՝ նկատողություն:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին Դիմողին և փաստաբան Արմեն Մուխսիկարոյանին իրազեկելու (հանձնելու) մասին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Սիմոն Բաբայան

**06 դեկտեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/116-Ա
ք. Երևան**